ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **12/10/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻ

2022 թվականի հոկտեմբերի 12-ին, ժամը 11:00-ին Սիսիանի համայնքապետարանի շենքում, նիստերի դահլիճում տեղի ունեցավ Սիսիանի նորընտիր ավագանու առաջին նիստը:

Ավագանու նիստին մասնակցում էին՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Սեյրան. Ավետիսյանը, թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Ստեփանյանը.

ԶԼՄ ներկայացուցիչներ՝ Անկախ դիտորդ հասարակական դաշինք – Մարիամ Դավթյան, Աննա Ռուբենյան,
Սիվիլնեթ – Արմինե Սիմոնյան, Լևոն Հակոբյան.

Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ՝ Արմինե Հարությունյանը, Հայկուհի Բլբուլյանը, Օսաննա Մարկոսյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը, Քնարիկ Շահգալդյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Աննա Կարապետյանը

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի՝ նիստը վարում էր նիստին ներկա տարիքով ավագ անդամը: Ավագանու անդամներից տարիքով ավագ անդամը Նախշուն Յազուլյանն էր:

Համաձայն Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կողմից ներկայացված գրանցման թերթիկի, նիստին մասնակցում էր Սիսիանի համայնքի ավագանու 21 անդամներից 17-ը:

Բացակա էին՝ Իսկուհի Բաղդասարյանը, Արա Զաքարյանը, Տիգրան Իվանյանը, Արմիդա Վարդանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 25-ի ընտրությունների արդյունքում թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 2-ի «Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանի ընտրելու մասին» թիվ 28-Ա որոշման համաձայն Սիսիանի համայնքի ավագանու անդամներ են ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից՝ 8 անդամ, «Աշխատանք և արդարություն» կուսակցությունների դաշինքից՝ 5 անդամ, «Ապրելու

երկիր» կուսակցությունից՝ 4 անդամ, «Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցությունից՝ 2 անդամ և «Մեկ Հայաստան» կուսակցությունից՝ 2 անդամ:

Համաձայն թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N7 արձանագրության նորընտիր ավագանու անդամներ են՝

«Մեկ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Հարությունյան Մարտին Մայիսի
2. Հարությունյան Անի Դերենիկի

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Հակոբջանյան Արմեն Բենյամինի
2. Միրզախանյան Արմենակ Վարուժանի
3. Գրիգորյան Անիկ Մարտունիկի
4. Հովհաննիսյան Կարեն Գրիշայի
5. Առաքելյան Հովսեփ Հրաչի
6. Պետրոսյան Անահիտ Շավարշի
7. Եղիազարյան երվանդ Լորիկի
8. Թամրազովա Բելլա Մաքսիմի

«Աշխատանք և արդարություն» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից՝

1. Առաքելյան Հայկ Ատոմի
2. Մարտիրոսյան Նվեր Հոկտիկի
3. Հովհաննիսյան Գալյա Արկադյայի
4. Խաչատրյան Հարություն Հրաչիկի
5. Խառատյան Սոնա Կամոյի

«Ապրելու երկիր» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Զաքարյան Արա Արտավազդի
2. Իվանյան Տիգրան Սևադայի
3. Բաղդասարյան Իսկուհի Սամվելի
4. Վարդանյան Արմիդա Կորյունի

«Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Մուսաթյան Սևակ Սասունի
2. Յազուլյան Նախշուն Լևոնի

Համաձայն Ընտրական օրենսգրքի (սահմանադրական օրենք) 142.2-րդ հոդվածի՝

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածով, հիմք ընդունելով թիվ 34

ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 2-ի «Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանի ընտրելու մասին» թիվ 28-Ա որոշումը,

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 12-ի առաջին նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի ընտրության մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական գումարման օրը սահմանելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի նորընտիր ավագանու խմբակցություններ ստեղծելու մասին:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01-Ա/

Համաձայն Ընտրական օրենսգրքի (սահմանադրական օրենք) 142.2-րդ հոդվածի 1-ին մասի, նիստն անընդհատ է մինչև համայնքի ղեկավարի ընտրությունը՝ բացառությամբ ընդմիջումների՝ 14:00-15:00-ն, այնուհետև՝ յուրաքանչյուր երկու ժամը մեկ անգամ՝ 30 րոպե:

Նախքան օրակարգի 1-ին հարցին անցնելը՝ աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Աննա Կարապետյանը մանրամասն ներկայացրեց համայնքի ղեկավարի ընտրության անցկացման կարգը:

Ավագանու խմբակցությունները ներկայացրեցին իրենց թեկնածուներին՝
«Մեկ Հայաստան» կուսակցություն – թեկնածու չառաջադրեց
«Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցություն – Սևակ Սասունի Մուսաթյան
«Աշխատանք և արդարություն» կուսակցությունների դաշինք – Հայկ Ատոմի Առաքելյան
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն - Արմեն Բենյամինի Հակոբջանյան

Առաջադրված թեկնածուները ելույթներ ունեցան: Այնուհետև անցկացվեց բաց քվեարկություն: Քվեարկության արդյունքում ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Սևակ Սասունի Մուսաթյան – 2 ձայն
Հայկ Ատոմի Առաքելյան – 7 ձայն
Արմեն Բենյամինի Հակոբջանյան – 8 ձայն
Ընտրական օրենսգրքի (սահմանադրական օրենք) 142.2-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթների համաձայն, քանի որ առաջադրված թեկնածուներից որևէ մեկը չստացավ ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, առավելագույն ձայներ ստացած 2 թեկնածուների՝ **Արմեն Բենյամինի Հակոբջանյանի և Հայկ Ատոմի Առաքելյանի** միջև անցկացվեց քվեարկության երկրորդ փուլ:

Քվեարկության երկրորդ փուլի արդյունքներով ավագանու անդամների ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Հայկ Ատոմի Առաքելյան – 7 ձայն
Արմեն Բենյամինի Հակոբջանյան – 9 ձայն

«Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության ավագանու անդամ Սևակ Սասունի Մուսաթյանի կողմից ներկայացված քվաթերթիկում որևէ նշագրում կատարված չէր:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի (սահմանադրական օրենք) 142.2-րդ հոդվածով և հիմք ընդունելով ավագանու անդամների 2-րդ փուլի բաց քվեարկության արդյունքներն ու նիստը վարողի հայտարարությունը.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավար է ընտրվում Արմեն Բենյամինի Հակոբջանյանը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասով,

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի երդման արարողությունը տեղի կունենա 2022 թվականի հոկտեմբերի 15-ին, ժամը 11:00-ին:
2. Նիստը տեղի կունենա Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ ք. Սիսիան, Սիսական 44Ա հասցեում՝ «Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի դահլիճում:
3. Սիսիանի համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի վրա:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 03-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով,

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի հոկտեմբերի 28-ին, ժամը 11:00-ին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 04-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 28-Ա որոշումը,

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու հետևյալ խմբակցություններ՝
   1) «Քաղաքացիական պայմանագիր»,
   2) «Աշխատանք և արդարություն»,
   3) «Ապրելու երկիր»,
   4) «Մեկ Հայաստան»,
   5) «Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք»:

2. Հանձնարարել ավագանու խմբակցություններին Սիսիանի համայնքի ղեկավարին գրավոր ներկայացնել խմբակցության կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները և ազգանունները:

4-րդ հարցի ներկայացման ժամանակ քվորում չապահովվեց և հնչեցված հարցը չդրվեց քվեարկության ու տեղափոխվեց առաջիկա նիստի քննարկմանը:

Ավագանու անդամներ

ՀԱՅԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՆԱ ԽԱՌԱՏՅԱՆ Իրա փոխարեն է ստորագրել

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Իրա՛ փոխարեն է ստորագրել

ՄԱՐՏԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՎԵՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՄՈՒՍԱԹՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ________________

Նիստն արձանագրեց՝ Աննա Կարապետյանը________________